Հավելյալ Ապահովության Եկամուտ (SSI) Ոչ Քաղաքացիների Համար

Բովանդակություն

Ո՞վ կարող է ստանալ Հավելյալ Ապահովության Եկամուտ (SSI)	1
Որոշ այլ ոչ քաղաքացիներ, որոնք կարող են SSI վճարների իրավունակ լինել, հետևյալն են՝	2
Որոշ ոչ քաղաքացիների համար յոթ տարվա սահմանաչափ	2
Աշխատանքի միավորները (կրեդիտները)	3
Մեզ անհրաժեշտ է Ձեր կարգավիճակի հավաստիքը	3
Տեղեկատվություն Medicaid-ի վերաբերյալ	4
Դուք կարող եք նոր հայց ներկայացնել	4
Եթե Դուք ունեք հովանավոր	4
Սոցիալական Ապահովության համարներ	4
Քաղաքացի դառնալը	4
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Ո՞վ կարող է ստանալ Հավելյալ Ապահովության Եկամուտ (SSI)

Ընդհանուր առումով, եթե Դուք քաղաքացի չեք՝ Ներքին Անվտանգության Նախարարության (Department of Homeland Security (DHS)) կողմից շնորհված որոշակի ներգաղթական դասակարգումներից որևէ մեկով, ապա Դուք կարող եք SSI իրավուսություն ունենալ, եթե՝

- Դուք օրինականորեն բնակվել եք Միացյալ Նահանգներում 1996թ-ի օգոստոսի 22-ից, և Դուք կույր եք կամ հաշմանդամ; կամ
- Դուք ստացել եք SSI 1996թ-ի օգոստոսի 22-ից, և Դուք օրինականորեն բնակվում եք Միացյալ Նահանգներում; կամ
- Դուք օրինականորեն ընդունվել եք մշտական բնակության Ներգաղթման և Քաղաքացիության մասին Օրենքի (Nationality Act (INA)) համաձայն, և Դուք ԱՄՆ-ում ունեք աշխատանքի ընդհանուր 40 միավոր (կրեդիտ). (Ձեր կողակցի կամ ծնողի աշխատանքը նույնպես կարող է հաշվարկվել):

ՆՇՈՒՄ՝ *Եթե Դուք մուտք եք գործել Միացյալ Նահանգներ 1996թ-ի օգոստոսի 2-ին կամ դրանից հետո, ապա այդ դեպքում Դուք*

չեք կարող իրավունակ լինել SSI-ի համար առաջին հինգ տարիների ընթացքում՝ որպես օրինականորեն ընդունված մշտաբնակ, անգամ եթե հասույթից 40 միավոր (կրեդիտ) ունեք:

Որոշ այլ ոչ քաղաքացիներ, որոնք կարող են SSI վճարների իրավունակ լինել, հետևյալն են՝

- ԱՄՆ զինված ուժերի զինվորական ծառայության անդամներ;
- Դաշնային մակարդակով ճանաչված Հնդկական ցեղերի ոչ քաղաքացի անդամներ;
- Որոշակի ոչ քաղաքացիներ՝ ընդունված որպես Ամերասիան ներգաղթածներ;
- Կուբայից/Հայիթիից ժամանածներ՝ ընդունված Փախստականների Կարթության Աջակցության մասին Օրենքի (Cuban/Haitian entrantss admitted under the Refugee Education Assistance Act) համաձայն;
- Մարդկանց առքուվաճառքի (թրաֆիքինգի) ծանր ձևերի որոշակի զոհեր; և
- Իրաքի կամ Աֆղանստանի որոշ հատուկ ներգաղթողներ, որոնք ընդունվել են որպես օրինական մշտաբնակներ:

Կան նաև ուրիշներ, որոնք կարող են իրավունակ լինել վճարումները ստանալու համար: Եթե Դուք քաղաքացի չեք և ցանկանում էք դիմել SSI նպաստների համար, ապա կապ հաստատե՛ք մեզ հետ՝ Ձեր իրավունակությունը ստուգելու համար:

Որոշ ոչ քաղաքացիների համար յոթ տարվա սահմանաչափ

Որոշ փախստականներ և այ ոչ քաղաքացիներ կարող են ստանալ SSI մինչև յոթ տարվա ընթացքում: Եթե Ձեր SSI վճարումները սահմանափակված են մինչև յոթ տարին՝ ելնելով Ձեր քաղաքացի չհանդիսանալու հատկանշական կարգավիճակից, ապա մենք նամակ կհասցեագրենք Ձեզ՝ տեղեկացնելով Ձեր յոթ տարվա ժամանակահատվածի ավարտի մասին: Մենք նաև մեկ ուրիշ նամակ կհասցեագրենք ենք Ձեզ՝ որտեղ կբացատրվեն Ձեր բողոքարկման իրավունքները, նախքան վճարումների կատարման դադարեցումը:

Եթե Դուք հանդիսնաում եք SSI վճարների ներկայիս կամ նախկին ստացող՝ ելնելով յոթ տարի ժամանակահատվածի սահամաչափով SSI իրավունակությունից, և դիմել եք քաղաքացիության համար, մենք հորդորում ենք Ձեզ կապ հաստատել ԱՄՆ Քաղաքացիության և Ներգաղթման Ծառայությունների (Citizenship and Immigration Services (USCIS)) հետ՝ պարզաբանելու, թե ինչպես պետք է՝

- Արագացնել Ձեր ընթացքի մեջ գտնվող քաղաքացիություն ստանալու իրավունքների ստացումը (նատուրալիզացիա) (N-400) կամ կարգավիճակի համաձայնեցումը (I-485); և
- Հրաժարվելու վճարներից, որոնք առնչվում են տվյալ դիմումները ներկայացնելու արժեքին:

Դուք (կամ Ձեր ներկայացուցիչը) կարող եք անվճար զանգահարել USCIS՝ **1-800-375-5283** հեռախոսահամարով (գլխավոր մենյուից ընտրեք SSI տարբերակը) կամ **1-800-767-1833** հեռախոսահամարով՝ եթե Դուք ունեք խլություն կամ լսողության խնդիրներ (TTY), և խնդրեք , ոպեսզի ընթացք տրվի արագացման գործընթացին: Դուք նաև կարող եք գրավոր ներկայացնել արագացման գործընթացը սկսելու խնդրանքը կամ այցելլով USCIS-ի տեղամասային գրասենյակ: Վստահ եղեք, որ տեղեկացրել եք Ձեր ներկայիս կամ նախկին SSI ստացող լինելու մասին: Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք զանգհարել USCIS-ի Ձեր տեղամասային գրասենյակ, կամ այցելել USCIS կայքը՝ ***www.USCIS.gov/feewaiver հասցեով:***

ՆՇՈՒՄ՝ *Փախստականների, ապաստարան փնտրողների և որոշակի մարադասիրական ներգաղթողների, այդ թվում մարդկանց առքուվաճառքի (թրաֆիքինգի) զոհերի SSI իրավունակության յոթ տարվա ժամանակահատվածը երկարացվում է երկու տարով (կամ որոշակի պայմանների ներքո մինչև երեք տարի)՝ 2011թ-ի Սեպտեմբերի 30-ից մինչև 2008թ-ի հոկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածի համար: Իմացե՛ք ավելին՝ այցելելով* ***www.socialsecurity.gov/pubs/11051-sup.html կայքէջը:***

Աշխատանքի միավորները (կրեդիտները)

Անձի աշխատանքային փորձի պատմությունը որոշում է Սոցիալական Ապահովության նպաստների համար իր իրավունակությունը, ինչպես նաև SSI իրավունակությունը՝ որոշակի ոչ քաղաքացիների համար: Անձը վաստակում է աշխատանքային միավորներ (կրեդիտներ)՝ հիմնվելով վաստակած գումարի վրա: Աշխտանքային միավոր (կրեդիտ) վաստակելու համար անհրաժեշտ գումարը յուրաքանչյուր տարի աննշանորեն աճում է՝ քանի որ բարձրանում է միջին հասույթի մակարդակը:

Սոցիալական Ապահովության նպաստների համար անձը կարող է տարեկան առավելագույնը վաստակել չորս միավոր (կրեդիտ)՝ կախված իր սեփական հասույթից: Քաղաքացի չհանդիսացող անձը նույնպես կարող է տարեկան լրացուցիչ միավորներ (կրեդիտներ) ստանալ՝ հիմնվելով կողակցի (ամուսնական զույգի) կամ ծնողի աշխատանքի վրա:

Աշխատանքային միավորները (կրեդիտները) մնում են անձի աշխատանքային գրանցումներում (գրքույկում) անորոշ ժամանակով: Կողակցից կամ ծնողից վաստակած հավելյալ աշխատանքային միավորները (կրեդիտները) օգնում են իարավունակությունը բնորոշելու ժամանակ, սակայն չեն գրանցվում քաղաքացիություն չունեցող անձի աշխատանքային գրանցումներում (գրքույկում) և չեն հաշվարկվում նպաստների գումարը որոշելու ժամանակ: Լրացուցիչ տեղեկատվության համար հարցրե՛ք Ինչպես Վաստակել Միավորներ (Կրեդիտներ) (*How You Earn Credits*) (SSA Publication No. 05-10072) հրապարակությունը:

Մեզ անհրաժեշտ է Ձեր կարգավիճակի հավաստիքը

Երբ Դուք դիմում եք SSI համար, Դուք պետք ապացուցեք Ձեր ոչ քաղաքացու կարգավիճակը: Քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք ծառայել են ԱՄՆ զինված ուժերում, հնարավոր է նաև անհրաժեշտություն ունենան մեզ ներկայացնելու իրենց զինվորական ծառայության հավաստիքը: Ստորև ներկայացված են մեզ ներկայացնելու ենթակա փաստաթղթերի օրինակները՝

- Որպես Ձեր ոչ քաղաքացու կարգավիճակի հավաստիք. ընթացիկ I-94 Ձևաթուղթ (ժամանելու/մեկնելու գրանցումներ) կամ I-551 Ձևաթուղթ (օրիական մշտաբնակի քարտ)՝ շնորհված Ներքին Անվատնգության Նախարարության (DHS) կողմից, կամ ներգաղթողների հարցով դատավորի որոշումը՝ վտարումը կասեցնելու կամ ապաստարան տրամադրեու վերաբերյալ; կամ
- Զինվորական ծառայության հավաստիք. ԱՄՆ զինվորական ծառույությունից զորացրվելու փաստաթղթեր (DD Ձևաթուղթ 214), որը վկայում է պատվավոր զորացրման մասին՝ անկախ Ձեր ոչ քաղաքացու կարգավիճակից:

Սոցիալական Ապահովության Ձեր տեղամասային գրասենյակը կարող է ասել Ձեզ, թե ուրիշ ինչ ապացույցներ կարող եք ներկայացնել՝ Ձեր կարգավիճակը հավաստելու նպատակով:

(շրջել)

Տեղեկատվություն Medicaid-ի վերաբերյալ

Եթե Դուք ունեք Medicaid-ի ծածկույթ՝ հիմնված Ձեր SSI վրա, Ձեր Medicaid-ը պետք է շարունակվի այնքան ժամանակ որքան Դուք ստանում եք SSI.

Դուք կարող եք նոր հայց ներկայացնել

Եթե Ձեր SSI վճարումները դադարեցվում են քանի որ Դուք հանդիսանում եք քաղաքացիություն չունեցող անհիրավունակ անձ, ապա Դուք կարող եք կրկին դիմել: Անմիջապես կապ հաստատե՛ք մեզ հետ՝ եթե Ձեր ներգաղթական կարգավիճակը փոփոխվում է, կամ եթե Դուք դառնում եք ԱՄՆ քաղաքացի, և կարծում եք որ իրավունակ եք կամ ունեք աշխատանքային 40 միավոր (կրեդիտ): Ձեզ անհրաժեշտ կլինի մեզ ներկայացնել Ձեր քաղաքացիությունը ստանալու իրավունքների վկայականը և այլ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս Ձեր ներկայիս ներգաղթական կարգավիճակը:

Եթե Դուք ունեք հովանավոր

Երբ Դուք մուտք եք գործում Միացյալ Նահանգներ, Դուք կարող եք ապահովել որպեսզի որևէ մեկը համաձայնագիր ստորագրի՝ Ձեզ աջակցություն ցուցաբերելու նպատակով: Այդ համաձայնագիրը կոչվում է աջակցության վկայություն, (affidavit of support) և այն ստորագրող անձը կոչվում է Ձեր Հովանավորը:

Մենք հաշվարկում ենք Ձեր հովանավորի և նրա կողակցի եկամուտների և միջոցների մասնաբաժինը որպես Ձերը՝ Միացյալ Նահանգներ Ձեր մուտք գործելու պահից: Սոցիալական Ապահովության Ձեր տեղամասային գրասենյակը կարող է Ձեզ հավելյալ տեղեկատվություն տրամադրել այս կանոնների վերաբերյալ, և թե ինչ նշանակություն ունեն դրանք Ձեզ համար:

Սոցիալական Ապահովության համարներ

Եթե Դուք օրինականորեն ընդունված ոչ քաղաքացի եք՝ Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվությամբ, ապա Ձեզ կարող է անհարաժեշտ լինել Սոցիալական Ապահովության համարանիշ: Հարցրեք Սոցիալական Ապահովության Համարներ՝ Ոչ-քաղաքացիների համար (*Social Security Numbers for Noncitizens*) (Publication No. 05-10096) հրապարակությունը:

Քաղաքացի դառնալը

Միացյալ Նահանգների Քաղաքացի դառնալու մասին ավելին իմանալու համար, զանգահարե՛ք USCIS `**1-800-375-5283** անվճար հեռախոսահամարով (խլություն կամ լսողության խնդիրներ ունենալու դեպքում, զանգահարե՛ք **1-800-767-1833** TTY հեռախոսահամարին): Դուք նույնպես կարող եք դիմել Ձեր USCIS տեղամասային գրասենյակ կամ նրանց այցելել առցանց ` **www.uscis.gov** կայքում:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

(շրջել)

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Social Security Administration
Publication No. 05-11051-AM | August 2017 (September 2015 editions may be used)
Հավելյալ Ապահովության Եկամուտ (SSI) Ոչ Քաղաքացիների Համար
Supplemental Security Income for Noncitizens (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: